ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2021թ. № 352

ԳԵՎՈՐԳ ՎԱԼԵՐԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 48[1]-րդ և 76-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման» կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 50-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09072021-06-0033 վկայականը և Գևորգ Վալերիկի Թովմասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 397» հասցեում գտնվող 06-006-0502-0047 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00198 հեկտար մակերեսով հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրել Գևորգ Վալերիկի Թովմասյանին (ծնված 22.03.1980թ.): Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը սահմանել 5940 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 300 ՀՀ դրամ):

2. Գևորգ Վալերիկի Թովմասյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Էդգար Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 04 » հոկտեմբերի 2021թ. № 353

«ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐ» ԵՎ «ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՕՐ» ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, «Ուսուցչի օր» և «Գրադարանավարի օր» տոների առիթով շնորհավորական բացիկներ և ծաղկային կոմպոզիցիաներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 98 600 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» հոկտեմբերի 2021թ. № 354

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 7 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 90 000 (իննսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 4
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2021թ. հոկտեմբերի «04» թիվ 354 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Սոց. քարտի համարը	Անձնագրային տվյալները	Գումարը ՀՀ դրամ
1	Ռիմա Միրզոյան	7811710099	AT0410386, տրված 09.09.2020թ., 052-ի կողմից	15 000
2	Վալերիկ Մաթոսյան	4014750418	003214301, տրված 15.05.2020թ., 052-ի կողմից	15 000
3	Հակոբյան Կարինե	7401660148	AU0371016, տրված 28.07.2021թ., 052-ի կողմից	15 000
4	Զոյա Կարապետյան	5202550081	AM0463520, տրված 07.10.2011թ., 052-ի կողմից	15 000
5	Վալենտինա Դավթյան	6414520187	004979563, տրված 11.07.2014թ., 052-ի կողմից	15 000
6	Գագիկ Թումանյան	3809650129	AM0797085, տրված 06.07.2012թ., 052-ի կողմից	15 000

Ընդամենը՝ 90 000 (իննսուն հազար) ՀՀ դրամ

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ _____ Ք. Նիկողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» հոկտեմբերի 2021թ. № 355

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 197 որոշմանը կից ցուցակում Արծրունի Ռաֆիկի Մաթոսյանի անունը սխալմամբ գրվել է «Արծրուն», հիմք ընդունելով Արծրունի Ռաֆիկի Մաթոսյանի նույնականացման քարտը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Առափնյա, Պանրագործների, Թումանյան և Բանավան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 197 որոշմանը կից ցուցակի 477-րդ տողում նշված «Արծրուն» բառը փոխարինել «Արծրունի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 4
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» հոկտեմբերի 2021թ. № 356

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՄԱԶՈՆԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 62-րդ կետերով, հիմք ընդունելով, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1957052 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006TG49LCR) և Արմենուհի Ամազոնի Բաբայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արմենուհի Ամազոնի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող՝ 06-006-0493-0002 կադաստրային ծածկագրով, 0,057 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինության «ք.Սպիտակ, Խնկոյան փողոց» հասցեն փոփոխել «ք.Սպիտակ, Շ. Թորոսյան փողոց, թիվ 154» հասցեով (փոստային դասիչը՝ 1804):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 6
ք.Սպիտակ